ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ---- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը. Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քարտուղարություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Հ/հ	Հաստիքների անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձը
Քարտուղարություն					
1	քարտուղարության պետ	1	697,000		697,000
2	քարտուղարության պետի տեղակալ	2	561,000		1,122,000
3	գլխավոր մասնագետ	4	323,000		1,292,000
4	առաջատար մասնագետ	2	289,000		578,000
Ընդհանուր բաժին					
5	բաժնի պետ	1	408,000		408,000
6	գլխավոր մասնագետ	5	289,000		1,445,000
7	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
8	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
Քաղաքացիների սպասարկման բաժին					
9	բաժնի պետ	1	408,000		408,000
10	գլխավոր մասնագետ	7	289,000		2,023,000
11	առաջատար մասնագետ	11	282,200		3,104,200
12	առաջին կարգի մասնագետ	4	272,000		1,088,000
13	քաղաքացիական կացության ակտերի գրանցման սպասարկման կենտրոնի առաջին կարգի մասնագետ	17	132,300		2,249,100
Զանգերի սպասարկման և աջակցման բաժին					
14	բաժնի պետ	1	408,000		408,000
15	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
16	առաջատար մասնագետ	11	282,200		3,104,200
17	առաջին կարգի մասնագետ	5	272,000		1,360,000
Արխիվային գործի վարման բաժին					
18	բաժնի պետ	1	408,000		408,000
19	գլխավոր մասնագետ-գլխավոր արխիվագետ	1	289,000	34680	323,680
20	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	81			21,966,380

»

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ընդամենը՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «668.5» և «227,306,580» թվերը փոխարինել համապատասխանաբար «678.5» և «230,482,180» թվերով:

3) «Ամբողջը» տողում «1968.5» և «611,887,380» թվերը փոխարինել «1978.5» և «615,062,980» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա ՆՔ-Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետև՝ նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Քարտուղարությունը հանդիսանում է աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում, որը պատասխանատու է աշխատակազմի ստորաբաժանումներում իրականացվող ներքին գործավարության ճիշտ կազմակերպման, վարման, գործավարական միասնական համակարգի նկատմամբ վերահսկողության իրականացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բոլոր գերատեսչությունների հետ ամենօրյա ռեժիմով մուտքագրվող և ելքագրվող փաստաթղթերի բնականոն ընթացք ապահովելու համար: Այն ապահովում է Երևանի քաղաքապետարանի ներքին գործավարությունը, փաստաթղթերի արխիվացումը և «Թեժ գծով» ստացվող զանգերի սպասարկումը, ինչերով պայմանավորված հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի առանցքային նշանակություն ունեցող կառուցվածքային ստորաբաժանումներից մեկը:

Քարտուղարությունն իր գործունեությունն իրականացնում է նաև անմիջական շփման միջոցով թե՛ քաղաքացիների, և թե՛ քաղաքապետարանի կառուցվածքային ստորաբաժանումների հետ՝ հանդիսանալով նաև կապող օղակ վերջիններիս միջև:

2022 թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում Երևանի քաղաքապետարանում շրջանառվել է շուրջ 102500 փաստաթուղթ, 2023 թվականի նույն ժամանակահատվածի ընթացքում շուրջ 118000 փաստաթուղթ (մոտ 15500 փաստաթղթով ավել), որոնց կատարման ժամկետների և պատասխանների բովանդակության նկատմամբ անհրաժեշտ է սահմանել պատշաճ վերահսկողություն:

Ներկայումս մշակվում է Երևանի քաղաքապետարանի հավելված ստեղծելու գաղափարը, որի միջոցով քաղաքացիներն անմիջապես կարող են իրենց մտահոգող խնդիրները, առաջարկները, դիտողությունները ներկայացնեն քաղաքապետարան: Հավելվածի ներդրումով կաճի նաև Երևանի քաղաքապետարան փոխանցվող տեղեկատվությունը, ինչը կարիք է ունենալու ուսումնասիրության, վերլուծության, արագ արձագանքման: Սույն գործառույթը համահունչ է «Թեժ գիծ» գաղափարի հետ, որի սպասարկումն իրականացնում է Քարտուղարության զանգերի աջակցման բաժինը:

Կարևորելով քաղաքացիների սպասարկման որակի բարձրացումը, նրանց դյուրընկալելի և բովանդակային պատասխաններ տրամադրելու անհրաժեշտությունը, հաշվի առնելով փաստաթղթաշրջանառության ծավալի էական ավելացումը, ինչպես նաև

դրա քանակի աճի նկատվող միտումը՝ քաղաքապետարանի ղեկավարության կողմից առաջ է քաշվել նոր պահանջ՝ սահմանել հսկողություն ինչպես փաստաթղթերի կատարման ժամկետների, այնպես էլ դրանց պատասխանների տեխնիկական և բովանդակային մասի նկատմամբ:

Նպատակ ունենալով ապահովելու վերը նշված պահանջի կատարումը առաջարկվում է համալրում կատարել Քարտուղարության հաստիքացուցակում: Առաջարկվող համալրման արդյունքում Քարտուղարությունում կավելանա ևս 10 հաստիք՝

Քարտուղարության պետի տեղակալ – 1 հաստիք

Քարտուղարության գլխավոր մասնագետ – 2 հաստիք

Քարտուղարության առաջատար մասնագետ -2 հաստիք

Քարտուղարության զանգերի աջակցման բաժնի առաջատար մասնագետ – 3 հաստիք

Քարտուղարության զանգերի աջակցման բաժնի առաջին կարգի մասնագետ – 2 հաստիք

Քարտուղարության գլխավոր և առաջատար մասնագետների Քարտուղարության ոչ մի կառուցվածքային ստորաբաժանումում ներգրավված չլինելը պայմանավորված է Քարտուղարության այլ աշխատանքներից զերծ պահելու հանգամանքով և այդ հաստիքները պետք է համալրվեն մասնագիտական բարձր որակավորում ունեցող աշխատակիցներով (իրավաբան, ճարտարապետ, տնտեսագետ):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխոիթյուններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ